

ՊԱՏԱՆԱԳՐԱԿ

Տարեկան դին և Պոլսոյ համար 8 ԲՆՃ.
Պատանագրաց 10 ԲՆՃ.
Վեցամս. և Պոլսոյ 4 ԲՆՃ.
Պատանագրաց 5 ԲՆՃ.
Օտար երկրներու 50 Ֆր.
Պատանագրաց և Պոլսոյ համար 3 Պոլսոյ երկրու անգամի հա-
մար 2 Պոլսոյ և Պատանագրաց համար զատ անգամի թիւն կը-
լայ 1
Իրաքանչիւր թիւ 2 զընդոյ թուլի.



ՀԱՆԱՊԱՁՕՐԵԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՏԱՆԱԳՐԱԿՈՒՄ 28 ՓԵՏՐՎԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Պ. Տը Թօքլիլի ծրագրին յաջո-
ղութեան յայտարարութեան հետեւեալն արդէն ծանուցած էինք :
Դադողի լրագրաց խորհրդածութիւն-
ներէն քանի մը քաղաքացիներ կրնան
այս նկատմամբ դադարաւ մը տալ :
Լա ֆրանս կրնէ թէ Օսմանեան ար-
ժեթի զինեւուն անցեալները
բարձրանալը չհաջողութեան ար-
դիւնք էր, քանզի հասարակութիւնը
բողոքովին երեսն ձգած է զանոնք,
և կարելի է այս առթիւն օգուտ քա-
ղաքով Օսմանեան թուղթ ունեցողնե-
րը փաճառեն : Տէպա լրագրերը կրնէ
թէ Պ. Տը Թօքլիլ երկար ծխափայտ
քաղաքներուն հետ քանի մը սիկար ծը-
խեց և Կ. Պոլսէն փոխառութիւն մը
բերաւ մեզ : Երկար ժամանակէ՛ր վեր
հրապարակն Օսմանեան փոխառու-
թիւն մը տեսած չէր, բայց փոխառու-
չից և Օսմանեան Գոնսթանթնուլի
Հապարակ մէկ գիշերներու վիպասա-
նութեան կարգին անցնելու վարկի մը
բեկորներն են : Լը Թան կը կարծէ թէ
Օսմանեան պարտքը կրնայ վերափո-
խիլ, բայց կառավարութիւնը ո՛չ :
Կըսուի թէ Սինտիքա մը պիտի կաղ-
մուի և 200 միլիոն փոխառութեան
գոնէ կէսն ի մտոյ հասարակութե-
նէն պիտի խնդրուի : Բայց ոչ ոք,
կըյարէ Լը Թան, կը համարձակի կար-
ծել թէ հասարակութիւնն իւր ստա-
կը նոր հաստատելի յանձնախումբին
վրայ պոնտի մը հետ փոխէ : Իսկ եւ-
մբարկան թիւերը մը կրնէ թէ մինչև
որ Թուրքիա իւր եկամուտներն եւ-
րոպական վարչութեան մը չյանձնէ,
անկարելի է լուրջ բան մընել : Առ-
այժմ այս երմտական ծրագրերը Պօ-
սայի շարժումները կը նպաստաւորեն,
որոյմէ ճարպիկները միայն օգուտ կը
քաղեն :

Այս քաղաքացիները բաւական են
Եւրոպական մամուլին կարծիքն յայտ-
նելու Պ. Տը Թօքլիլի ծրագրին և
անոր պարտականութեան գործողութեան
վրայ : Բայց այս գործին երմտական
վարկի վերաբերեալ կողմնէ, քաղա-
քական կողմն աւելի մեծ հարուած
տուաւ անոր յաջողութեան : Ռուսի-
ոյ դեսպանին բողոքն և Բ. Դրան
պատասխանն արդէն հրատարակե-
ցինք : Կը հաստատուի որ Լապանօֆ
իշխանը Բ. Դրան ծանուցագիր մը ուղ-
ղեր է արտաքին գործոց նախարա-
րին և իւր նախկին առաջարկութեան
վրայ կը պնդէ : Ըսել է որ միջադա-
շին յանձնախումբին կազմութիւնը կը
պահանջէ դարձեալ, բայց ինչպէս ե-
րէկ կրնէինք, այս յանձնախումբն
ստակ չպիտի բերէ՝ այլ վիճաբանու-

թիւն, և նոյն միջոցին Օսմանեան ե-
լուսնաւորն ինչ պիտի լինի թղթագր-
բարկն ներկայ վիճակով : Խնդիր մ'է
այս, որոյ լուծումը գտնել գիտա-
րին է : Եթէ միջադաշին յանձնա-
խումբն ամեն բանէ առաջ փոխա-
ռութիւն մ'ընէ և թղթագրեալ վեր-
ցընէ կամ անոր արժեքը բարւոքէ,
կը հասկնամք իւր անմիջական օգու-
տը : Բայց զայն հաստատողներուն նը-
պատակն ո՛չ այնչափ Բ. Դրան երմը-
տական օգնութիւն մը տալ է, որչափ
իրենց կամ իրենց հարաւորաց առ-
նելիքներն ապահովել : Սակայն թըղ-
թագրումը ներկայ վիճակովն այն ևս
հաւանական չմտի՛ր : Եթէ միջադա-
շին յանձնախումբը մաքսերը չառ-
նու, թողլով որ մնացեալ եկամուտ-
ներով Բ. Դրան ինչ կուզէ այն ընէ :
Այսչափ ետական աշխարհագրութիւն
մ'երկրին ամենափոքր օգուտ մը չը
կրնար տալ, և օտարադիւններն հա-
րըստացնելու միայն կը ծառայէ :

Բ. Դրան իւր առջի սխալները
ցաւալի կերպիւ կը քաւէ, և հասա-
րակութիւնն ալ իրեն հետ ի միասին
կը տուէ : Իրաւունք ունին Եւրո-
պական լրագրերը Օսմանեան անցեալ
վարկն Հապար ու մէկ գիշերաց նը-
մանցներու, քանզի այն ժամանակի պե-
տական մարդիկ չթողուցին եկամուտ
մը որ փոխառութեան գրաւ չտային :
Ոչ միայն Ռուսիա, այլ և նախկին փո-
խառուներն, որոց մաքսերը գրաւ
ցոյց տրուած են, լրագրաց միջոցաւ
բողոքեցին Պ. Տը Թօքլիլի ծրագրին
դէմ : 1858 թ. և 1862 թ. փոխառու-
թեանց մաքսերը գրաւ տրուած էին,
և անոնք արժեթիւղթի տէրերուն
մասնախումբին կողմէն Պ. Հայտ Բը-
լարք բողոք մը հրատարակեց : Վեր-
ջապէս մեր նախկին պետական մար-
դիկը չթողուցին եկամուտի ճիւղ մը
որ գրաւէ ազատ լինէր, և հիմայ ա-
մեն գործողութիւն բողոքի կը հան-
դիպի : Հին գրութիւնը ծանր բեռ
մը թողուց երկրին վրայ, և նոր դը-
րութիւնն ամեն կողմէ դժուարու-
թեամբ չըջապատեալ է :

Ինչպէս կը տեսնուի, այս խոր-
հրդածութիւններն յուսադիր չեն,
բայց յուստեսութեան վրայ չեն հիմ-
նուած, և կրնամք ըսել թէ երկրին
վիճակը ճշգիւ կը ներկայեն, վիճակ
մը, որոյ բարւոքումը նախախնամու-
թեան կը մնայ :

Անգղիական Սթէյթսմէնթ լրագրերը
սուտ կը հանէ Թայմը լրագրոյն ֆա-
րիզի թղթակցին տուած այն լուրը
թէ Եւրոպական պարտուց տոկոսը
կէս առ կէս պիտի նուազի Անգլիոյ
և Դադողի պաշտօնական հաւանու-
թեամբ : Այսու ամենայնիւ, Սթէյ-
թսմէնթ կը խոստովանի թէ սոկոսներու
նուազման ծրագրեր կան, թէպէտ
ոչ այնքան ընդարձակութեամբ որքան

Թայմը կրնէ, և հաւանական կը կար-
ծէ թէ Եւրոպական առանձնաշնորհ-
եալ արժեթիւղթերն առ այժմ տոկոսի
համեմատական նուազում մը պիտի
կրնան կրնէ : Սթէյթսմէնթ կըյարէ թէ
Խալիֆն այժմ ամբողջապէս հատուց-
ման նպատակաւ իրողութիւն մը, որ
եթէ ստոյգ է, Խալիֆին կողմանէ իբր
փորձ մը կրնայ նկատուիլ Եւրոպա-
կան արժեթիւղթատեարց քով վերադա-
նալ քերքերու այն ժողովրդականու-
թիւնն որ վերջին ժամանակներս քիչ
մը կտրած է :

ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲՈՒՄԵԼԻԻ

ԳԼՈՒԽ Ե.

ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

(Ծարանային Գրք ԲՆՃ 2264)

Յօդ. 25. — Ժողովոյն ամեն մէկ
անդամն իւր քուէն անձամբ կուտայ :
Գրքներն երեւոյթով կամ յանուա-
նէ կուգան կը տրուին : Օրինաց ծը-
րագիր մը յօդուած առ յօդուած
քուէարկուելէ յետոյ միայն կրնայ
ընդունուիլ :

Յօդ. 26. — Սոյն յօդուածին տը-
րամագրութիւնները ժողովոյն ներքին
բարեկարգութեան, առ վեհ. Սուլ-
թանն և առ անոր ներկայացուցիչ-
ները պարտ եղած յարգանաց, և
վերջապէս սոյն պարտուց դէմ մե-
ղանշողաց պատժոյն կը վերաբերի :

Յօդ. 27. — Սոյն յօդուածին դը-
լաւոր կէտերն են հետեւեալք :

Նահանգային ժողովոյ նիստերն
հրապարակային են :

Եթէ բարեկարգութիւնը խաղա-
րի, նախագահն իրաւունք ունի ժո-
ղովարանը պարպել տալու :

Աղերսագրերն ուղղակի ժողովոյն
պէտք է ներկայացուին նախագահին
կամ անդամի մը կողմէ :

Ժողովը դռնփակ կը գումարուի
եթէ դիւանին անդամը կամ ներկայ
անդամաց դէմ մէկ երրորդը խնդ-
րեն :

Յօդ. 28. — Ժողովոյն բոլոր ան-
դամներն ազատ են քուէ տալու, և
իրենց ատենախօսութեանց, գրուա-
ծոց և այլոց համար միայն այն ատեն
դատաստանի կրնան ենթարկուիլ երբ
վեց երեսխօսանք խնդրեն և ժողովն
հաւանութիւն տայ : Անոնց դէմ ի-
րենց պաշտօնէն դուրս բաներու հա-
մար պատժական դատաստան չկրնար
բացուիլ ժողովոյ նիստերուն շրջանին
մէջ՝ եթէ արդարութեան բարձրա-
դոյն ատենին ընդհանուր դատաւա-
րը խնդրած և ժողովն ալ հաւանու-
թիւն տուած չլինի :

Յօդ. 29. — Ժողովն իւր ներքին

կանոնադրութիւնը կը պատրաստէ և
կը քուէարկէ :

Յօդ. 30. — Ատենադահլիճին
ները դրաւ որ չեն կրնար լինիլ : Նա-
հանգային ժողովոյն անդամներն ա-
զատ են իրենց պաշտօնին վերաբեր-
եալ ատենադրութեանց, ծանօթու-
թեանց, առաջարկութեանց և գըր-
ւածոց համար թուրքերէն, Պոլսոյ
երէն և Յունարէն լեզուներէն մին
գործածել :

Յօդ. 31. — Ընդհանուր կառավա-
րիչը ժողովոյն հետ կը հաղորդակցի
գրաւորապէս, կամ իւր կողմէ նըշա-
նակեալ մէկ կամ աւելի ընդհանուր
տնօրէններու միջոցաւ, և կամ ժո-
ղովին մէջէն կամ գուրուէն ընտրած
պատուիրակներու միջոցաւ : Ամեն
նստի մէջ իրեն ներկայացուցիչ պէտք
ունենայ դէմ ընդհանուր տնօրէն մը
կամ պատուիրակ մը : Ընդհանուր տը-
նօրէնը աղատապէս կը մտնեն նահան-
գային ժողովն և ուղած ժամանակ-
նին պէտք է լսելի լինին : Նահան-
գային վարչութեան արարոց վրայ
ընդհանուր տնօրէններուն և պատ-
ուիրակաց հարցումներ կրնան լինիլ :

Յօդ. 32. — Նահանգային ժողովն
իւր ձեռնհասութեան վերաբերեալ
և ընդհանուր կառավարչին ներկա-
յացեալ օրինաց ծրագրերը քննելով
առանց փոփոխութեան կընդունի,
կը բարեփոխէ կամ կը մերժէ : Ընդ-
հանուր կառավարիչը կրնայ ետ առ-
նուլ ամեն օրինաց ծրագիր, քանի
որ ժողովը քուէ տուած չէ անոր առ-
բողովութեան վրայ :

Յօդ. 33. — Նահանգային ժողովը
կրնայ ուղերձի միջոցաւ ընդհա-
նուր կառավարչին յանձնարարել այն
ամեն խնդրոց քննութիւնն, որոյ վը-
րայ օրինաց ծրագրոյ մը կամ հառա-
րակաց օգտակար առաջարկութեան
մը պատրաստութիւնն ու ներկայա-
ցումն յարմար դատէ :

Ժողովը կրնայ ընդհանուր կառա-
վարչին պէս օրէնք առաջարկել, քա-
նի որ նահանգին պիտուէին վրայ
ծախք մը բեռնաւորելու խնդիր չլինի :
Ընդհանուր կառավարչին կողմէ
առաջարկեալ օրինաց ծրագրերէն
զատ, անդամաց կողմէ ալ կրնայ օրէ-
նաց ծրագիր առաջարկել, բայց առ-
նուազն վեց անգամէ ստորագրեալ
պէտք է լինի :

Նահանգային ժողովին առ ընդ-
հանուր կառավարչին մատուցուելիք
ուղերձը կրնայ նշանակել այն սիկըր-
ներն որոց համեմատ կուզէ որ օրի-
նաց ծրագիրը կամ հասարակաց օգուտի
վերաբերեալ առաջարկութիւնը խըմ-
բագրի :

Ընդհանուր կառավարիչը պարտի
խնդրուած ծրագիրը անպատճառ
ներկայել, և մինչև որ ժողովն որո-
շում չտայ, չկրնար դայն ետ առնուլ :

Յօդ. 34. — Ամեն տարւոյ սալորա-

Այս ձև իւթիւներուն ամենէն առաջ տեսակը որուն մէջ կրակը չը մտնի և աղէկ կը գործէ, կը ծախուի. ի. Պօլիս Ղալաթիա Սինասեան և ընկերացի Սեբրիկայի մոզագան: